

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇԻ
ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՆԱՀԻՏ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍՄԿԿ XXVI համագումարում ընդգծվեց, որ 11-րդ հնգամյակի գլխավոր խնդիրն է «ապահովել սովետական մարդկանց բարեկեցության հետագա աճը ժողովրդական տնտեսության հաստատուն, առաջընթաց զարգացման հիման վրա, գիտատեխնիկական առաջադիմությունն արագացնելու, էկոնոմիկան զարգացման ինտենսիվ ուղու վրա փոխադրելու, երկրի արտադրական պոտենցիալն ավելի ռացիոնալ օգտագործելու, ռեսուրսների բոլոր տեսակները ըստ ամենայնի խնայելու և աշխատանքի որակը բարելավելու հիման վրա»¹։ Այդ խնդրի հաջող լուծման կարևորագույն գրավականն արտադրության արդյունավետության բարձրացումն է։ Սակայն առ այսօր արտադրության արդյունավետության բարձրացման տեսական շատ հարցեր չեն լուծվել։ Դրանցից է նաև արդյունավետության չափանիշի և ցուցանիշների հարցը։

Պլանաչափ զարգացող էկոնոմիկայի պայմաններում հասարակական արտադրության տնտեսական արդյունավետության պրոբլեմի առավել կարևոր ասպեկտը վերջինիս քանակական ցուցանիշների մշակումն է, որն արտացոլելու է դրա դինամիկան և մակարդակը։ Այն վերլուծության, պլանավորման, վերահսկողության և խթանման, ինչպես նաև տնտեսական արդյունավետության չափանիշի ճիշտ բնորոշման գիտական հիմնավորման հիմքն է։

Հասարակական արտադրության արդյունավետության պրոբլեմը բարդ և բազմակողմանի է։ Հետևապես առաջ են գալիս մի շարք հարցեր, որոնց հետ տնտեսագետներն առնչվում են արդյունավետության չափանիշի որոշման ժամանակ։ Դրա հետևանքով արդյունավետության չափանիշների բովանդակության, քանակական արտահայտման, չափման հնարավորության ու եղանակների հարցում տնտեսագետները միակարծիք չեն²։ Տնտեսագիտական գրականության մեջ հաճախ «չափանիշ» և «ցուցանիշ» հասկացությունները նույնացվում են, մինչդեռ դրանք պետք է հաստատեն տարբեր իրարից։ Չափանիշը տնտեսական համակարգի բաղկացուցիչ տարրերի ընդհանրացման արդյունքն է և ընտրությունը որոշող հիմնական սկզբունքը։ Այս բնորոշումը պատկերացում է տալիս արտադրության արդյունավետության չափանիշի թվաքանակի մասին, այն մասին, թե արդյոք կարո՞ղ են գոյություն ունենալ ընտրությունը որոշող մի քանի հիմնական սկզբունքներ։ Պետք է ընդգծել, որ չափանիշի բազմաբանակության գաղափարը հակասում է սոցիալիստական էկոնոմիկայի նպատակի միասնությանը։ Արտադրության միջոցների հանրային սեփականությունից առաջացած և դրանով որոշվող սոցիալիստական էկոնոմիկան ժողովրդական ամբողջ տնտեսության գործունեությունը ենթարկում է այդ նպատակին։ Այս ամենը սոցիալիստական էկոնոմիկայի բոլոր մակարդակներում (ժողովրդական տնտեսություն—ճյուղ—միավորում—ձեռնարկություն) առաջացնում է ծախսումների և ռեսուրսների տնտեսական արդյունավետ

¹ ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը, Երևան, 1981, էջ 61։

² Այս պրոբլեմի վերաբերյալ առկա են բազմաթիվ դրույթներ։ Սակայն մենք նպատակ չենք դրել (և դա հնարավոր էլ չէ) մի հոդվածի սահմաններում քննարկել գոյություն ունեցող բոլոր դրույթները։

տույթյան գնահատման միասնական սկզբունքի անհրաժեշտությունը, Երբ խոսվում է չափանիշների համակարգի մասին, ապա, մեր կարծիքով, նույնացվում են էությունն արտահայտող չափանիշը և երևույթը բնորոշող ցուցանիշների համակարգը:

Քանի որ այս կամ այն տնտեսական երևույթը հետազոտվում է որոշակի արտադրական հարաբերությունների շրջանակներում, ապա չափանիշը պետք է արտահայտի վերջիններիս որակական կողմը, էությունը: Հետևապես, սոցիալիստական հասարակական արտադրության տնտեսական արդյունավետության չափանիշը տնտեսական օրենքների համակարգի (նախ և առաջ հիմնական տնտեսական օրենքի) հետ անխախտելի միասնության մեջ է: Սովետական տնտեսական արդյունավետության համընդհանուր չափանիշ են համարում կոմունիստական համակարգի արագ կառուցումը: Սակայն այդպիսի չափանիշը տալիս է արդյունավետության լոկ որակական գնահատումը: Իսկ տնտեսական համակարգի զարգացման մեջ օպտիմալ որոշումներ ընդունելիս անհրաժեշտ է քանակական չափանիշ, քանի-որ հասարակական արտադրության տնտեսական արդյունավետության քանակական չափումը նրա պլանավորման և կառավարման օբյեկտիվ նախադրյալն է: Անհրաժեշտ է նշել, որ, բացահայտելով արդյունավետության չափանիշի էությունը, պետք է տարբերել դրա տեսական և կիրառական ասպեկտները: Չափանիշի վերոհիշյալ տեսական բնորոշումը կիրառական հետազոտությունների համար ստեղծում է մեթոդոլոգիական նախադրյալ: Արտադրության տնտեսական արդյունավետության չափանիշի բովանդակության վերաբերյալ կարելի է առանձնացնել հետևյալ չորս տեսակետները. առաջին՝ հավելյալ արդյունքի արտադրության և նորմայի մեծացումը, երկրորդ՝ սպառման աճը, երրորդ՝ հասարակական աշխատանքի արտադրողականության աճը, չորրորդ՝ ազգային եկամտի (զուտ արդյունքի) մաքսիմալացումը: Քննենք այդ տեսակետներից առաջինը: Հավելյալ արդյունքը և դրա նորման երևույթների մակերեսին հանդես են գալիս որոշակի ձևափոխություններով՝ հիմնականում շահույթի և դրա նորմայի ձևերով: Սոցիալիստական էկոնոմիկայում շահույթի ստացումը նպատակ չէ, չնայած այն կարևոր տնտեսաշարժարկային ցուցանիշ է և անմիջականորեն հաշվի է առնում տնտեսաշարժարկային կազմակերպությունների գործունեությունն ու շահերը: Բացի այդ, այն ավելի մեծ նպատակի՝ սոցիալիստական հասարակության բոլոր անդամների նյութական և հոգևոր պահանջմունքների առավել լրիվ և բազմակողմանի բավարարման հիմնական աղբյուրն է: Առավելագույն շահույթը չի համապատասխանում արդյունավետության չափանիշին, քանի որ այսպիսի բնորոշման ժամանակ հաշվի չեն առնվում արտադրության արդյունավետության չափանիշի պարտադիր տարր հանդիսացող ծախսումները: Այնուհետև, շահույթի դերի անհամեմատ մեծացումը տնտեսաշարժարկային կոլեկտիվներին հնարավորություն է ընձեռում սեփական շահերը պետականից վեր դասելու (դրանով իսկ ձախողելով կոոպերացված մատակարարումները) և ստանալու գերպլանային շահույթ՝ իրենց համար «շահավետ» արտադրանքի դիմաց: Այս ուղղությամբ կարևոր նշանակություն ունեցավ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1979 թ. հուլիսի 12-ի որոշումը³: Դրանով առաջին պլան մղվեց պայմանագրային պարտավորությունների կատարումը և շահույթի բաշխման նոր կարգի (նորմատիվային մեթոդի) մշակումը: Շահութաբերությունը նույնպես չի կարող հանդիսանալ արդյունավետության չափանիշ, չնայած վերջինս շահույթի համեմատությամբ ունի այն առավելությունները, որ սրա ժամանակ հաշվի են առնվում ֆոնդերը և: Սակայն արտադրության արդյունավետության տեսակետից պետք է հաշվի առնվեն ոչ միայն ֆոնդերը, այլև հասարակական աշխատանքի ծախսումները: Այնուհանդերձ, արդյունավետության պրոբլեմների լուծման ժա-

³ «Совершенствование хозяйственного механизма. Сборник документов», М., 1980, с. 3.

մանակակից պայմաններում շահութաբերությունը կարող է տնտհաշվարկային կազմակերպությունների արդյունավետության կարևոր ցուցանիշ հանդիսանալ:

Ինչ վերաբերվում է երկրորդ տեսակետին, ապա դրա հետ դժվար է համաձայնվել հենց մեթոդոլոգիական տեսակետից: Տվյալ դեպքում շեշտը դրվում է հասարակական վերարտադրության եզրափակիչ փուլի՝ սպառման վրա և դրանով իսկ տեսադաշտից դուրս է մնում նյութական արտադրության որոշիչ ու գլխավոր դերը: Այսպիսով, տնտեսական արդյունավետությունը փոխարինվում է սոցիալականով: Սոցիալական արդյունավետությունը սերտ կապի մեջ է տնտեսական արդյունավետության հետ: Ավելին, սոցիալական արդյունավետությունը վերջին հաշվով գլխավորը, որոշիչն է, քանի որ արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացման ուղղված ցանկացած տնտեսական միջոցառում ընդունելի կլինի միայն այն ժամանակ, երբ բարելավվեն աշխատավորների կենսապայմանները: Սակայն աշխատավորների բարեկեցության բարձրացումը, որպես գլխավոր նպատակ, չի կարելի հասկանալ պարզեցված ձևով, որովհետև բաշխել, սպառել կարելի է այն, ինչ արտադրված է: Մեր պլանների ուժն այն է, որ դրանք կենսամակարդակի վերելքն անխախտելիորեն կապում են հասարակական արտադրության աճի, աշխատանքի արտադրողականության բարձրացման հետ: Իսկ տրեստական արդյունավետությունը հանգեցնում է արտադրանքի միավորի հաշվով աշխատանքի ամբողջական ծախսումների կրճատմանը, դրանով իսկ առկա ռեսուրսների (աշխատանքային, նյութական, ֆինանսական) պայմաններում հասարակական արդյունքի և ազգային եկամտի արտադրության ավելացմանը:

Երրորդ տեսակետի համաձայն հասարակական արտադրության արդյունավետության չափանիշը հասարակական աշխատանքի արտադրողականության աճն է: Մեր կարծիքով, եթե հարցադրումը, որն ի դեպ հաշվի է առնում հասարակության ամբողջական ծախսումները, ընդունելի է, ապա այն արտահայտում է արտադրողական ուժերի արդյունավետությունն ընդհանրապես, անկախ դրանց սոցիալ-տնտեսական ձևից:

Ավելի հանգամանորեն քննենք վերջին տեսակետը, քանի որ մենք հիմնականում բաժանում ենք այն: Նշեցինք, որ ըստ այդ տեսակետի, հասարակական արտադրության արդյունավետության միակ չափանիշը պետք է համարել կենդանի և առարկայացած աշխատանքի, կուտակման և սպառման ֆոնդերի օպտիմալ հարաբերակցության պայմաններում ստացված ազգային եկամտի մաքսիմալացումը: Մեր կարծիքով այդ բնորոշումն ավելի է համապատասխանում սոցիալիստական արտադրության գլխավոր նպատակին՝ հասարակության բոլոր անդամների նյութական և հոգևոր պահանջմունքների առավել լրիվ ու բազմակողմանի բավարարմանը և դրան հասնելու միջոցներին: Իհարկե, այստեղ պետք է հաշվի առնել պլանավորվող ժամանակաշրջանի արտադրության աճը և հաջորդ տարիներին վերարտադրության օպտիմալ տեմպերը: Առաջարկվող չափանիշի առավելությունը պետք է համարել դրա քանակական չափակցման հնարավորությունը: Դա խիստ կարևոր է հատկապես ժամանակակից պայմաններում, երբ 11-րդ հնգամյակից սկսած բոլոր ցուցանիշները հաշվարկվում են նորմատիվային զուտ արդյունքի հիման վրա, որն ազգային եկամտի արտադրության մեջ տվյալ կոնկրետի կոնկրետ ներդրումն է: Տվյալ հարաբերակցության համարիչում ազգային եկամտի (և ոչ թե համախառն արտադրանքի) ցուցանիշի ընտրությունը պատահական չէ: Վերջինիս նկատմամբ ազգային եկամտի ցուցանիշն ունի այն առավելությունը, որ ավելի սերտորեն է կապված հիմնական տնտեսական օրենքի հետ, այսինքն՝ ազգային եկամտի աճի դինամիկան ինչպես արժեքային, այնպես էլ բնաիրային կառուցվածքով ավելի է շեշտում սոցիալիստական արտադրության գլխավոր նպատակը: Ազգային եկամտի մեջ անհրաժեշտ արդյունքի

ապելացումը նշանակում է նյութական արտադրության ոլորտի աշխատողների եկամուտների աճ, հետևապես նաև բարեկեցության վերելքը, իսկ հապելալ արդյունքի աճն ապահովում է ոչ նյութական ոլորտի ընդլայնումը, սոցիալիստական հասարակության անդամների հոգևոր զարգացումը, սպասարկման ոլորտում զբաղված աշխատողների կենսամակարդակի բարձրացումը, արտադրական կուտակումները: Այնուհետև, ազգային եկամուտն ունի այնպիսի մի հատկություն, որը բացակայում է մյուս ցուցանիշների մոտ: Բանն այն է, որ ազգային եկամուտը ներառում է միայն նոր ստեղծված արժեքը՝ անտեսելով դրա վրա կատարված ծախսումները: Ահա թե ինչու այն ավելի լայնորեն է արտացոլում արդյունքի մեծությունը:

Տնտեսական արդյունավետության չափանիշի որոշման համար ավելի ճիշտ կլինի ազգային եկամուտը հարաբերել բոլոր ծախսումների և ռեսուրսների (արտադրական ֆոնդերի) գումարի վրա: Սակայն մինչ այդ պետք է որոշել, թե մեթոդաբանական տեսակետից արդյոք ճիշտ է ընթացիկ ծախսումների (արտադրանքի ինքնարժեքի) և միանվագ ներդրումների (արտադրական ֆոնդերի) գումարումը և, երկրորդ, եթե այո, ապա ի՞նչպես պետք է դրանք գումարել: Դա հնարավոր կլինի վերջիններիս փոխադարձ ներքին կապի բացահայտմամբ: Այն արտահայտվում է նրանում, որ ծախսումները (կապիտալ ներդրումները) ուղղվում են ընթացիկ ծախսումների (ինքնարժեքի) հնարավոր իջեցմանը, քանի որ կատարելագործված արտադրական ֆոնդերը զգալիորեն կրճատում են ինքնարժեքի տարրերը կազմող նյութական և աշխատանքային ծախսումները:

Անհամեմատ դժվար է հարցի երկրորդ կողմը, այսինքն այն, թե ինչպես գումարել տնտեսական բնույթով տարբեր ընթացիկ և միանվագ ծախսումները կամ սրտադրանքի ինքնարժեքը և արտադրական ֆոնդերը: Դրանք ուղղակիորեն անհնար է գումարել, քանի որ ինքնարժեքի ծախսումները (հումք, նյութեր, վառելիք և այլն) կատարվում են յուրաքանչյուր արտադրական ցիկլի ընթացքում: Վերջիններիս գումարումը հնարավոր է դրանք ժամանակի միասնական միավորի վերածելու դեպքում: Ընթացիկ ծախսումները սովորաբար վերցվում են մեկ տարվա կտրվածքով, ուրեմն՝ միանվագ ծախսերը ևս պետք է վերցվեն նույն կտրվածքով: Այս բոլորը պլանավորման պրակտիկայում իրականացվում է տնտեսական արդյունավետության նորմատիվային գործակցի միջոցով (E_n): Այդ դեպքում ընթացիկ և միանվագ ծախսումների գումարը կարտահայտվի $C + E_n^{\Phi}$ տեսքով, որտեղ C -ն—արտադրանքի ինքնարժեքն է, իսկ Φ -ը՝ արտադրական ֆոնդերը:

Այսպիսով, ընդհանրացնող ցուցանիշի բանաձևը կունենա հետևյալ տեսքը՝

$$\Theta = \frac{v + m}{C + E_n \Phi},$$

եթե ինքնարժեքը (C) այն է, ինչ արժեք արտադրանքի արտադրությունը տնտեսվարկային ձեռնարկության համար, ապա $C + E_n \Phi$ -ը ամբողջ հասադակության կատարած ծախսումներն են:

Տնտեսական բարդ համակարգի գործունեության պրոցեսը և դրա առանձին կողմերը բնութագրելու համար անհրաժեշտ է կիրառել մասնակի ցուցանիշներ: Հետևապես արդյունավետության բազմաթիվ ձևերի առկայությունը, տնտեսական շրջանառության մեջ խոշոր ռեսուրսների ներդրումը, դրանց օգտագործման արդյունավետության արագ փոփոխումը թույլ են տալիս եզրակացնելու, որ սոցիալիստական էկոնոմիկայի պլանային կառավարման ներկա պայմաններում անհրաժեշտ է մտցնել արդյունավետության ցուցանիշների համակարգ, որը հնարավորություն կտա արդյունավետության առանձին կողմերը համաձայնեցնել դրա ընդհանուր չափանիշի հետ: Պլանավորման

պրակտիկայում իրականացվող փոփոխությունների հետ կապված (1981 թ. սկսած մշակվում են երկարատև հեռանկարային պլաններ) ըստ երևույթին ճիշտ կլինի մշակել սոցիալիստական էկոնոմիկայի, դրա առանձին ճյուղերի և ոլորտների, արդյունավետության պլանավորման տասնամյակային զարգացման մեթոդոլոգիական միասնական սկզբունքներ:

Ցուցանիշը սոցիալ-տնտեսական երևույթների և պրոցեսների ընդհանրացված քանակական բնութագիր է, այլ կերպ՝ դա արդյունավետության բնութագրման և արտահայտման ձևն է: Հասարակական արտադրության արդյունավետության ցուցանիշների փոխկապված համակարգն անհրաժեշտ է ամբողջ ժողովրդական տնտեսության և դրա առանձին օղակների արդյունավետության բարձրացման մակարդակի դինամիկայի և գործոնների բնութագրման համար: Ելնելով ցուցանիշների համակարգի օգտագործման խնդիրներից, մեր կարծիքով, այն պետք է կազմվի հետևյալ հիմնական սկզբունքների հիման վրա՝ նախ և առաջ՝ այդ համակարգը պետք է համապատասխանի արտադրության արդյունավետության ժողովրդատնտեսական չափանիշի և պլանավորման առանձին ցուցանիշների միջև փոխադարձ կապ ստեղծելուն, երկրորդ՝ արտացոլի արտադրության զարգացման հիմնական գործոնների արդյունավետությունը, երրորդ՝ ապահովի արտադրության արդյունավետության ցուցանիշների և ժողովրդատնտեսական պլանների կազմման սկզբունքների և գործող ցուցանիշների փոխադարձ կապը, չորրորդ՝ կանխորոշի արտադրության արդյունավետության ցուցանիշների խթանիչ ազդեցությունը արտադրական ռեզերվների ակտիվացման վրա, հինգերորդ՝ բարելավի առկա արտադրության միջոցների և աշխատանքային ռեսուրսների օգտագործումը: Ելնելով դրանց բովանդակությունից և նշանակությունից, կիրառվող ցուցանիշների համակարգը կարելի է խմբավորել և դասակարգել ըստ տարբեր հատկանիշների: Ընդհանրապես դրանք կարելի է ստորաբաժանել հիմնականի և ընդհանրացնողի: Հիմնական ցուցանիշներ պետք է համարել ռեսուրսների և ծախսումների առանձին տեսակների օգտագործման արդյունավետությունը բնութագրողները: Այսպես, այդ կարգի կարևոր ցուցանիշներից են աշխատուժի օգտագործման արդյունավետությունը՝ աշխատանքի արտադրողականության կամ դրան հակադարձ մեծության՝ աշխատատարության (Te) միջոցով աշխատանքի միջոցների (հիմնական ֆոնդերի) օգտագործման ցուցանիշները՝ ֆոնդահատույցի կամ ֆոնդատարության (Φe) միջոցով, աշխատանքի առարկայի օգտագործումը բնորոշող ցուցանիշները՝ նյութատարության (Me) միջոցով:

Ցուցանիշների երկրորդ խումբը՝ ընդհանրացնող ցուցանիշները, ներառում են ա) բնակչության մեկ շնչի հաշվով ազգային եկամտի աճի տեմպերը (դրանք ունեն այն թերությունը, որ որոշվում են արտադրության ոլորտից դուրս գտնվող գործոններով, մասնավորապես երկրի բնակչության դինամիկայով), բ) ծախսումների 1 ու. ընկնող ազգային եկամտի արտադրությունը, գ) ժողովրդատնտեսական շահութաբերությունը, դ) 1 ու. հասարակական արդյունքին ընկնող արտադրության և շրջանառության ծախսերը, ե) նյութական ոլորտի ռեսուրսների և ծախսումների տարբեր տեսակների՝ արտադրական ֆոնդերի, նյութական ծախսումների, աշխատանքի վարձատրության ֆոնդի հարաբերական տնտեսումը և նյութական արտադրության ճյուղերի, միավորումների ու ձեռնարկությունների մասշտաբով ցուցանիշների խումբը (զուտ, համախառն, ապրանքային արտադրանքի արտադրության աճի տեմպերը): Անհրաժեշտ է նշել, որ «արտադրության աճի տեմպեր» ցուցանիշն արդյունավետության բնութագրման համար հարմար չէ, քանի որ այն արտադրության արդյունքները բնութագրում է ռեսուրսներից և ծախսումներից անկախ: Կարևոր ցուցանիշներից են 1 ու. ծախսումներին ընկնող զուտ արդյունքը, ընդհանուր շահութաբերությունը և այլն:

Առաջին խմբի վերահիշյալ ցուցանիշներից յուրաքանչյուրը (աշխատանքի արտադրողականություն, նյութատարություն, ֆոնդահատույց) տարբեր

ծախսումների և ռեսուրսների (աշխատանքային, հիմնական արտադրական ֆոնդերի և նյութական) օգտագործման արդյունավետության բնութագրման համար ունի կարևոր նշանակություն: Սակայն առանձին վերցրած դրանք չեն կարող բնորոշել արտադրության արդյունավետության մակարդակը: Այդ են վկայում № 1 աղյուսակի տվյալները⁴:

Աղյուսակ № 1

Տնտեսական արդյունավետության հիմնական ցուցանիշները
ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության և արդյունաբերության մեջ

ցուցանիշներ	1975	1976	1977	1978	1979	1980	1980 թ. %-ով, 1975 թ. համարմամբ
1 ժողովրդական տնտեսություն							
ա) հասարակական արդյունքի աշխատատարությունը	89	87	84	80	79,6	77,5	87,1
բ) կենդանի աշխատանքի արտադրողականությունը (ռ.)	1123	1148	1193	1243	1255	1289,7	114,8
գ) հասարակական արդյունքի ֆոնդատարությունը (ռ.)	93,3	96	98,1	101,1	104,6	107,1	114,8
դ) ֆոնդահատույց (ռ.)	1,07	1,04	1,02	0,99	0,95	0,93	86,9
ե) հասարակական արդյունքի նյութատարությունը (ռ.)	57,8	57,3	57,2	57	57,3	57,2	98,9
2 արդյունաբերություն							
ա) արդյունաբերական արտադրության աշխատատարությունը	66,5	65,9	63,9	62,3	61,3	59,8	89,9
բ) աշխատանքի արտադրողականությունը (ռ.)	15035	15169	15641	16047	16304	16705	111,1
գ) արտադրանքի ֆոնդատարությունը (ռ.)	0,753	0,788	0,803	0,830	0,863	0,894	118,7
դ) ֆոնդահատույց (ռ.)	1,33	1,27	1,24	1,2	1,16	1,12	84,1
ե) արտադրանքի նյութատարությունը (ռ.)	0,676	0,641	0,734	0,733	0,729	0,725	107,2

№ 1 աղյուսակից երևում է, որ հասարակական արդյունքի աշխատատարությունը 1975—1980 թթ. իջել է 12,9%-ով, իսկ աշխատանքի արտադրողականությունը համապատասխանաբար բարձրացել 14,8%-ով: Աշխատանքի արտադրողականության աճի հաշվին նույն ժամանակամիջոցում ստացվել է ազգային եկամտի 59%-ը⁵: Այդ տարիներին ֆոնդահատույցի անկումը չի դադարել, որի մասին վկայում է արտադրության ֆոնդատարության 14,8% աճը: Դրական երևույթ է նյութահատույցի բարձրացումը, որի հետևանքով արտադրանքի նյութատարությունը իջել է 1,1%-ով: Արդյունաբերության արդյունավետության տվյալների վերլուծությունից պարզվում է, որ նշված ժամա-

⁴ «Народное хозяйство СССР в 1978 г.», М., 1979, с. 137, 386; «Народное хозяйство СССР в 1979 г.», М., 1980, с. 54, 135, 147, 163, 386—387, 405, 535, 537—538, 541; «Народное хозяйство СССР в 1980 г.», М., 1981, с. 49, 123, 134, 153, 356, 357, 379, 503, 506, 570.

⁵ Հաշվարկները կատարված են մեր կողմից, աղյուսակի տվյալների հիման վրա:

նակաշրջանում աշխատանքի արտադրողականությունը բարձրացել է 11,1%-ով, իսկ աշխատատարությունը, ընդհանրապես, իջել 10,1%-ով: Աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին ստացվել է արդյունաբերության մեջ ստեղծված ազգային եկամտի 57%-ը⁶: Ինչպես տեսնում ենք, աշխատանքի արտադրողականության հաշվին ստացված ազգային եկամտի աճը ժողովրդական տնտեսության մեջ ավելի բարձր է, քան արդյունաբերության մեջ: Ֆոնդահատույցն ընկել է նաև արդյունաբերության մեջ, որի հետևանքով ֆոնդատարությունն աճել է 18,7%-ով, որը նույնպես որոշակի չափով բարձր է ժողովրդատնտեսականի համապատասխան ցուցանիշից: Արդյունաբերական արտադրանքի նյութատարությունը, ի հակադրություն ժողովրդական տնտեսության, աճել է 7,2%-ով: Այդ պատճառով նյութահատույցն իջել է:

Վերոհիշյալ վերլուծությունից հետևում է, որ արդյունավետության հիմնական ցուցանիշներն ունեցել են փոփոխման տարբեր միտումներ: Դրա հետևանքով արտադրության արդյունավետության փոփոխման մասին որևէ եզրակացություն կատարել հնարավոր չէ: Ուստի անհրաժեշտ է հաշվարկել արդյունավետության ընդհանրացնող ցուցանիշները: Դրանց են վերաբերվում № 2 աղյուսակի տվյալները⁷:

№ 2 աղյուսակի տվյալները վկայում են, որ 1980 թ. 1 ռ. արտադրական ֆոնդերին ընկնող ազգային եկամուտը, 1975 թ. նկատմամբ, կրճատվել է 31%-ով (այսինքն ֆոնդահատույցն իջել է): Հասարակական աշխատանքի արտադրողականությունը նույն ժամանակաշրջանում բարձրացել է 16,4%-ով: № 2 աղյուսակի տվյալների վերլուծությունից երևում է, որ բերված ծախսումների 1 ռ. ընկնող ազգային եկամուտը աճել է 0,2%-ով: Մոտավորապես նույն պատկերն է նաև արդյունաբերության մեջ: Այսպես, արդյունաբերության արտադրական ֆոնդերի 1 ռ. ընկնող ազգային եկամուտն իջել է 14,3%-ով: Արդյունաբերական արդյունքի 1 ռ. հաշվով ծախսումներն իջել են 2,9%-ով, իսկ արդյունաբերական արտադրության շահութաբերությունը՝ 10,1%-ով: Այնուհետև, բերված ծախսումների 1 ռ. հաշվով ազգային եկամուտն աճել է 1,4%-ով, իսկ շրջանառու միջոցների շրջանառելիությունը իջել է 11,9%-ով:

Անհրաժեշտ է նշել, որ արդյունավետության բարդ պրոբլեմի ստվերոտ կողմերից մեկը հասարակական արտադրության մեջ դրա հաշվարկումն է՝ բանվորական աշխատատեղի մակարդակով: Չէ՞ որ հենց այստեղ են դրվում արդյունավետության և որակի հիմքերը, ստեղծվում ամբողջական էֆեկտի տարրերը: Դրա համար էլ պետք է ձգտել յուրաքանչյուր բանվորական աշխատատեղում բազմակողմանիորեն բացահայտել ամեն մի բանվորի ընդունակությունները, բարձրացնել նրա ստեղծագործական ակտիվությունը, միաժամանակ, իհարկե, ապահովելով նյութական շահագրգռվածությունը: Դրա հետ կապված, նպատակահարմար է արտադրության արդյունավետությունը բնորոշող ցուցանիշների թվում ընթացիկ տարում նախորդի համեմատությամբ 1 աշխատողի հաշվով ինքնարժեքի իջեցումից ստացված տնտեսման հաշվարկումը: Դրա համար առաջարկում ենք հետևյալ բանաձևը.

$$\Delta_c = \frac{\Delta(C_0 - C_1)}{P_1}, \text{ որտեղ}$$

Δ_c -ն ինքնարժեքի իջեցումից ստացված տնտեսումն է, C_0 -ն բազիսային տարվա արտադրանքի ինքնարժեքն է (ռ.), C_1 -ը տվյալ տարվա ար-

⁶ Հաշվարկները կատարված են մեր կողմից, աղյուսակի տվյալների հիման վրա:

⁷ «Народное хозяйство СССР в 1978 г.», с. 137, 386; «Народное хозяйство СССР в 1979 г.», с. 54, 135, 147, 163, 386—387, 405, 535, 537, 538, 541; «Народное хозяйство СССР в 1980 г.», с. 49, 123, 134, 153, 356—357, 379, 503, 506, 510.

տադրանքի ինքնարժեքն է (ռ.), P₁-ը՝ տվյալ տարվա աշխատողների թվաքանակը (մարդ):

Աղյուսակ № 3

Տնտեսական արդյունավետության ընդհանրացնող ցուցանիշները
ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության և արդյունաբերության մեջ

Ցուցանիշներ	1975	1976	1977	1978	1979	1980	1980 թ. -ով, 1976 թ. հիմամբ
1 ժողովրդական տնտեսություն							
ա) մեկ ուրվի արտադրական ֆոնդերին ընկնող ազգային եկամուտը (ռ.)	0,451	0,444	0,427	0,424	0,407	0,311	69
բ) նյութական արտադրության ոլորտում մեկ զբաղվածին ընկնող ազգային եկամուտը (ռ.)	4730	4900	5095	5342	5351	5508	116,4
գ) բերված ծախսումների մեկ ուրվուն ընկնող ազգային եկամուտը (ռ.)	0,431	0,437	0,434	0,436	0,429	0,432	100,2
դ) շրջանառու միջոցների շրջանառու- լիությունը	1,55	1,53	1,50	1,49	1,46	1,41	90,9
2 արդյունաբերություն							
ա) արդյունաբերության արտադրական ֆոնդերի մեկ ուրվուն ընկնող ազգա- յին եկամուտը (ռ.)	0,407	0,395	0,382	0,371	0,362	0,349	85,7
բ) արդյունաբերական արդյունքի մեկ ուրվուն ընկնող ծախսումները (կոպ.)	87,1	87,7	87,9	87,8	88,2	84,6	97,1
գ) արդյունաբերական արտադրության շահութաբերությունը (տոկոսներով)	15,8	15,9	15,9	15,6	14,6	14,2	89,9
դ) բերված ծախսումների մեկ ուրվուն ընկնող ազգային եկամուտը (ռ.)	0,37	0,37	0,364	0,363	0,364	0,375	101,4
ե) շրջանառու միջոցների շրջանառու- լիությունը	2,27	2,25	2,16	2,13	2,1	2	88,1

Նշված ցուցանիշի կիրառման տնտեսական էությունն այն է, որ, ելնելով տնտեսված ինքնարժեքի մեծությունից (վերջինս արտահայտվում է աշխատանքային, նյութական ռեսուրսների, էներգիայի տնտեսման, արտադրական ֆոնդերի արդյունավետ օգտագործման մեջ, որը ռեսուրսների ներկա սահմանափակվածությամբ պայմաններում ունի համապետական նշանակություն), հնարավոր է թողարկել ավելի մեծ քանակությամբ արդյունք:

Առաջարկվող ցուցանիշը, մեր կարծիքով, ունի այն առավելությունը, որ անմիջականորեն արտահայտում է կոլեկտիվի և դրա յուրաքանչյուր անդամի ջանքերն ու խթանում նրանց աշխատանքն այն բանով, որ արդյունքի թողարկման ավելացմամբ ավելի արագ և լրիվ են բավարարվում հասարակական պահանջումները: Բացի այդ, այն ունի նաև երկրորդ կողմը, որն առավել նշանակություն ստացավ ՍՄԿԿ XXVI համագումարից հետո: Դա խնայողության համար ծավալվող պայքարն է, որը 11-րդ հնգամյակի գլխավոր

խնդրի հաջող կատարման համար ժալալված համամիութենական սոցիալիստական մրցության կարևոր խնդիրն է:

Ահա այդ ցուցանիշը «Հայէլեկտրամեքենա» արտադրական միավորումում (տե՛ս աղյուսակ № 3)⁸:

Աղյուսակ № 3

Ցուցանիշներ	1977 թ.	1978 թ.	1979 թ.	1980 թ.
1 ինքնարժեքի իջեցումից ստացված աճն-տեսումը (հաղ. ու.)	1150	2557	962	939
2 արդյունաբերարտադրական անձնակազմի թվաքանակը (մարդ)	12235	12100	12050	11270
3 արդյունաբերարտադրական անձնակազմի մեկ աշխատողի հաշվով ինքնարժեքի անտեսումը (ու.)	90	211,3	79,8	83,3

№ 3 աղյուսակի տվյալները վկայում են, որ տնտեսումը համեմատաբար ավելին է եղել 1978 թ., իսկ հաջորդ տարիներին այն իջել է: Դա, մեր կարծիքով, խոսում է այդ միավորման տնտեսական ցուցանիշների վատացման մասին:

Այսպիսով, արդյունավետության չափանիշի և ցուցանիշների պրոբլեմի կարևորագույն կողմերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ դրանց ճիշտ լուծումը հասարակական արտադրության արդյունավետության հետագա աճի հնարավորություն կընձեռնի:

К ВОПРОСУ О КРИТЕРИИ ЭКОНОМИЧЕСКОЙ ЭФФЕКТИВНОСТИ ПРОИЗВОДСТВА И ОСНОВНЫХ ПОКАЗАТЕЛЯХ

АНАИТ СИМОНЯН

Резюме

Наиболее важным аспектом проблемы экономической эффективности в условиях планово-управляемой социалистической экономики является выбор критерия и основных показателей эффективности. Целостность социалистической экономики, порождаемая и определяемая общественной собственностью на средства производства, вызывает необходимость существования единого критерия. Когда говорят о системе критериев, происходит отождествление критерия, выражающего сущность, с системой показателей, характеризующих явления. На наш взгляд единым критерием является максимизация национального дохода (в неизменных ценах), полученного при заданных размерах живого

⁸ Աղյուսակը կազմված և հաշվարկված է «Հայէլեկտրամեքենա» արտադրական միավորման տվյալների հիման վրա:

и овеществленного труда при оптимальном соотношении фонда потребления и фонда накопления. Преимуществом предлагаемого критерия можно считать возможность его количественного измерения, что дает возможность данному критерию быть связующим звеном в системе показателей народного хозяйства. Систему показателей, характеризующих эффективность производства, целесообразно дополнить еще одним показателем, характеризующим эффективность труда на низовом уровне, поскольку именно здесь закладываются основы эффективности и качества. Обоснование единого критерия, а также расчеты основных и обобщающих показателей послужат надежным рычагом дальнейшего роста эффективности производства.